ԹՇՆԱՄՈՒ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

AMÉLIE NOTHOMB

COSMÉTIQUE DE L'ENNEMI

ROMAN

ԱՄԵԼԻ ԼՈՏՈՄԲ

ԹՇՆԱՄՈՒ ՀԱՐԴԱՐԱՆՔԸ

ՎԵՊ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Թագուհի Բլբուլյանի

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.133.1(493)-31 Նոտոմբ
ԳՄԴ 84(4Բե)-44
Ն 927

Ն 927 Նոտոմբ Ամելի
Թշնամու հարդարանքը: Վեպ / Ա. Նոտոմբ.- Եր.: Newmag, 2024.- ... էջ:

Անծանոթների հետ զրույցը, որպես կանոն, լավ ավարտ չի ունենում, այն էլ՝ Ամելի Նոտոմբի վեպերում: Անգյուստն օդակայանում ճանճրանում է՝ սպասելով հետաձգված թռիչքին: Դա էլ հերիք չէ, ստիպված է դիմանալ տարօրինակ անունով հոլանդացու՝ Տեքստոր Տեքսելի ճանճրալի շաղակրատանքին: Շատախոսին ինչպե՞ս ստիպել, որ սսկվի. իհարկե, սկսելով խոսել: Ու Անգյուստն ընկնում է այդ թակարդը: Դառնում է Տեքսելի ձեռքի խաղալիքը, ի սկզբանե նշանակված մեղավորը, կատարյալ զոհը: Այդպես Անգյուստն անցնում է դժոխքի բոլոր պարունակներով:

ՀՏԴ 821.133.1(493)-31 Նոտոմբ
ԳՄԴ 84(4Բե)-44

ISBN 978-9939-967-57-8

© Éditions Albin Michel – Paris, 2001
Ամելի Նոտոմբ, «Թշնամու հարդարանքը» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել ALBIN MICHEL ընկերության հետ կնքած պայմանագրով:

***

Հարդարանք: Տղամարդը ձեռքը սահեցրեց մազերի վրայով՝ փորձելով հարթեցնել դրանք: Զոհի վրա մասնագիտական հմտությունները բանեցնելու համար անհրաժեշտ էր ներկայանալի տեսք ունենալ: Երբ օդանավի ուղեկցորդուհին հայտարարեց, որ տեխնիկական պատճառներով թռիչքն անորոշ ժամանակով ուշանալու էր, Ժերոմի նյարդերն արդեն իսկ բավականաչափ լարված էին: «Միայն դա էր ինձ պակաս»,– մտածեց նա: Ատում էր օդանավակայանները, իսկ անհայտ ժամանակով սրահում սպասելու միտքը նրան հունից հանում էր: Պայուսակից մի գիրք հանեց և նյարդայնացած խորասուզվեց ընթերցանության մեջ:

— Բարի օր, պարո՛ն,– քաղաքավարի նրան դիմեց ինչ-որ մեկը:

Տղամարդն ակամա բարեկիրթ տոնով պատասխանեց բարևին՝ առանց քիթը գրքից կտրելու: Անծանոթը տեղավորվեց նրա կողքին:

— Օդանավերի ուշացումներն անտանելի են, չէ՞:

— Այո՛,– ատամների արանքից նետեց Ժերոմը:

— Գոնե հայտարարեին, թե որքան ենք սպասելու, որ հասկանալի լիներ՝ ինչով կարելի է զբաղվել:

Ժերոմ Անգյուստը գլխով համաձայնության նշան արեց:

— Հետաքրքի՞ր գիրք եք կարդում,– հարցրեց անծանոթը:

«Սա ի՞նչ է ինձնից ուզում»,– մտածեց Ժերոմը:

— Վատը չէ,– պատասխանեց նա այնպիսի տոնով, որը նշանակում էր՝ ինձ հանգիստ թող:

— Ձեր բախտը բերել է. ինձ չի հաջողվում կարդալ նման հասարակական վայրերում:

«Փաստորեն թույլ չի տալիս կարդալ այն մարդկանց, որոնց դա հաջողվում է»,– մտածեց Անգյուստը:

— Տանել չեմ կարողանում օդանավակայանները,– շարունակեց անծանոթը:

«Ես առավել ևս չեմ սիրում»,– խորհեց Ժերոմը:

— Միամիտները կարծում են, որ այդպիսի վայրերում ճանապարհորդների են հանդիպում: Ինչպիսի՜ միամտություն: Գիտե՞ք, թե ինչ տեսակի մարդկանց ենք այստեղ հանդիպում:

— Գլուխ արդուկողների՞,– ատամների արանքից նյարդայնացած նետեց իբր գիրք կարդացողը:

— Ո՛չ,– պատասխանեց անծանոթը, որը չհասկացավ ակնարկը, – դրանք գործուղման մեկնող պաշտոնյաներն են: Իսկ գործուղումը ճամփորդության ժխտումն է: Այդ գործողությունը պետք է կոչել «տեղափոխություն՝ առևտրական նպատակով»: Համաձայն չե՞ք, որ այդպես ավելի նպատակահարմար է:

— Ես ինքս գործնական ճամփորդություն եմ կատարում,– արտաբերեց Ժերոմը՝ մտածելով, որ անծանոթն իրենից ներողություն էր խնդրելու իր անկիրթ ու ոչ տեղին արտահայտության համար:

— Ճշտելու կարիք բոլորովին չկար, պարո՛ն: Դա ակնհայտ է:

«Նաև անտաշի մեկն է»,– զայրացավ Ժերոմը: Եվ քանի որ քաղաքավարության սահմաններն արդեն խախտվել էին, նա որոշեց, որ կարող էր իրեն թույլ տալ նույն կերպ վարվելու:

— Պարո՛ն, Դուք երևի չհասկացաք, սակայն ես Ձեզ հետ խոսելու ցանկություն չունեմ:

— Ինչո՞ւ,– սառնասրտորեն հարցրեց անծանոթը:

— Որովհետև կարդում եմ:

— Ո՛չ, Դուք չեք կարդում:

— Ի՞նչ ասացիք:

— Դուք չեք կարդում, գուցե պատրաստվում եք կարդալ: Այն, ինչ ես տեսնում եմ, ընթերցանություն չէ:

— Գիտե՞ք, ես չեմ ուզում Ձեզ հետ ընթերցանությանը վերաբերող խորիմաստ դատողություններ անել: Դուք ինձ նյարդայնացնում եք: Եթե նույնիսկ այս պահին չկարդայի, չէի ցանկանա Ձեզ հետ զրուցել:

— Ընթերցող մարդն իսկույն երևում է: Իսկական ընթերցող լինեիք, այստեղ չէիք լինի: Իսկ Դուք այստեղ եք, պարո՛ն:

— Միայն իմանայիք, թե որքան եմ զղջում դրա համար: Հատկապես Ձեր հայտնվելուց հետո:

— Այո՛, կյանքը լի է տհաճ և մանր-մունր անախորժություններով: Շատ ավելի տհաճ, քան մետաֆիզիկական խնդիրներն են: Այս ամենը գոյի անհեթեթությունն ազդարարող աննշմարելի խոչընդոտներ են:

— Պարո՛ն, Ձեր 2,5-ֆրանկանոց փիլիսոփայությունը կարող եք...

— Անհարգալից մի՛ եղեք:

— Դո՛ւք եք անհարգալից վարվում, Դո՛ւք:

— Տեքսել, Տեքստոր Տեքսել:

— Այդ ինչե՞ր եք դուրս տալիս:

— Ընդունե՛ք, որ երբ խոսակցի անունը հայտնի է, զրույցն ավելի հեշտ է ստացվում:

— Բայց ես նոր ասացի, որ չեմ ուզում Ձեզ հետ զրուցել:

— Ինչո՞ւ եք այդքան ագրեսիվ, պարո՛ն Ժերոմ Անգյուստ:

— Անունս որտեղի՞ց գիտեք:

— Ձեր ճամպրուկի վրա է գրված: Հասցեն՝ նույնպես:

Անգյուստը հառաչեց:

— Հետո ի՞նչ, ինձնից ի՞նչ եք ուզում:

— Ոչի՛նչ: Միայն խոսել:

— Սարսափում եմ խոսելու ցանկություն ունեցող մարդկանցից:

— Ցավում եմ, դժվար թե Ձեզ հաջողվի ինձ խանգարել, քանի որ խոսելն արգելված չէ:

Փորձելով գլուխն ազատել այդ կպչուն տիպից՝ Ժերոմը վեր կացավ ու մոտ հիսուն մետր այն կողմ տեղավորվեց: Ջուր ջանքեր: Պնդերես մարդը, նրան հետևելով, եկավ և նստեց անմիջապես կողքին: Ժերոմը կրկին վեր կացավ և շտապեց զբաղեցնել երկու ուղևորների միջև գտնվող ազատ տեղը: Այդպես ավելի պաշտպանված կզգար իրեն հետապնդողից: Սակայն վերջինիս դա էլ բոլորովին չշփոթեցրեց. նա եկավ, տնկվեց Ժերոմի դիմաց և վերսկսեց իր գրոհը:

— Դուք մասնագիտական խնդիրներ ունե՞ք:

— Դուք որոշել եք բոլորի ներկայությամբ ինձ հետ խոսե՞լ:

— Իսկ ի՞նչ խնդիր կա:

Անգյուստը ցանկացավ կրկին իր նախկին տեղը զբաղեցնել: Հակառակ դեպքում ստիպված էր լինելու հետաքրքրա-

սերների աչքի առաջ հանդուրժել իրեն ծամոնի նման կպած այդ տիպի ստորացումները:

— Դուք մասնագիտական խնդիր ունե՞ք,– կրկնեց Տեքսելը:

— Ինձ իզուր հարցեր մի՛ տվեք, չե՛մ պատասխանելու:

— Ինչո՞ւ:

— Ես չեմ կարող Ձեզ արգելել խոսել, որովհետև դա արգելված չէ, իսկ Դուք չեք կարող ինձ ստիպել պատասխանել, որովհետև ցավում եմ, սակայն այն պարտադիր չէ:

— Բայց Դուք հենց նոր ինձ պատասխանեցիք:

— Որպեսզի հետագա պատասխաններից ձեռնպահ մնամ:

— Ուրեմն, ես իմ մասին կխոսեմ:

— Էդպես էլ գիտեի:

— Ինչպես արդեն ասել եմ, իմ անունը Տեքսել է: Տեքստոր Տեքսել:

— Ցավում եմ:

— Այդպես եք ասում, քանի որ իմ անունը Ձեզ տարօրինա՞կ է թվում:

— Այդպես եմ ասում, որովհետև ցավում եմ, որ հանդիպել եմ Ձեզ, պարո՛ն:

— Բայցևայնպես, իմ անունն այնքան էլ տարօրինակ չէ: Տեքսելը սովորական ազգանուն է, որն իմ հոլանդական արմատների մասին է վկայում: Եվ տեսե՛ք, թե ի՜նչ լավ է հնչում՝ Տեքսե՛լ: Հը՞, ի՞նչ կասեք:

— Ոչի՛նչ:

— Իսկ Տեքստոր անունն ակնհայտորեն ավելի բարդ է, սակայն այն ազնվականության տարրեր է կրում: Գիտե՞ք, որ այն Գյոթեի բազմաթիվ անուններից մեկն է:

— Խե՛ղճ մարդ:

— Բայց այն այդքան էլ վատ չի հնչում:

— Վատը Ձեզ հետ խոսքի բռնվելն է, եթե նույնիսկ խոսքն անվան մասին է:

— Առաջին հայացքից տգեղ է թվում, սակայն «տեքստ» բառին է նման: Իսկ տեքստը բոլորին դուր է գալիս: Ձեր կարծիքով՝ ո՞րն է Տեքստոր անվան ստուգաբանությունը:

— Պատի՞ժ: Վրեժխնդրությո՞ւն:

— Գուցե Դուք ինչ-որ մե՞ղք եք գործել,– խորհրդավոր ժպիտով հարցրեց անծանոթը:

— Ես ոչ մի մեղք էլ չեմ գործել, պարզապես, իմ կարծիքով, արդարություն գոյություն չունի այս աշխարհում: Տուժողները մշտապես անմեղներն են լինում:

— Մտացածին բաներ եք ասում: Տեքստոր անունը «տեքստ» բառից է ծագում:

— Ինձ համար միևնույն է:

— «*Տեքստ*» բառը լատիներեն textere բայից է ծագել, որը նշանակում է «հյուսել»: Եվ իսկապես, տեքստն առաջին հերթին բառերի հյուսվածք է, այնպես չէ՞:

— Հետևաբար Ձեր անունը «ջուլհա՞կ» է նշանակում:

— Ես ավելի շուտ մյուս՝ «*խմբագիր*» իմաստն եմ նախընտրում: Նա, ով տեքստն է հյուսում: Ափսոս, որ նման ազգանունով գրող չեմ դարձել:

— Իսկապես, ավելի լավ կլիներ՝ անծանոթների գլուխը Ձեր դատարկաբանություններով տանելու փոխարեն թուղթ մրոտեիք:

— Խոստովանե՛ք, որ անունս շատ գեղեցիկ է, բայց պետք է անկեղծ լինեմ, որ այն ազգանվանս շատ չի սազում: Տեքստոր Տեքսել, մի տեսակ վատ է հնչում:

— Ձեզ համար լավ է:

— Տեքստոր Տեքսել,– կրկին արտաբերեց անծանոթը՝ շեշտելով ոչ այնքան հեշտ արտասանվող «*իքս*» և «*կ*» տառերը: – Երբեմն ինքս ինձ հարց եմ տալիս, թե տեսնես ծնողներիս մտքով ի՞նչ է անցել, որ ինձ այդպես են անվանել:

— Իրե՛նց հարցրեք:

— Նրանք վախճանվել են, երբ ես չորս տարեկան էի՝ այս առեղծվածը որպես ժառանգություն ինձ թողնելով ու պատգամելով, որ ես այն հետագայում պարզեմ:

— Լավ կլիներ, որ առանց ինձ պարզեիք:

— Տեքստոր Տեքսել... Ժամանակի հետ, երբ ընտելանում ես, դադարում ես այն անբարեհունչ համարել: Պետք է ասեմ, որ նույնիսկ հնչյունաբանական բացառիկ գրավչություն էլ կա այս անվան մեջ: Տեքստոր Տեքսել... Տեքստոր Տեքսել... Տեքստոր...

— Եվ երկա՞ր եք այն կրկնելու:

— Ինչպես լեզվաբան Գյուստավ Գիյոմն է գրում՝ այն, ինչ ակնահաճո է, ուղեղին էլ է հաճելի:

— Ի՞նչ կարելի է անել Ձեզ նմանների դեմ: Զուգարաններում փակվե՞լ:

— Դա Ձեզ չէր օգնի, հարգելի՛ պարոն: Մենք օդանավակայանում ենք, իսկ այնտեղի զուգարանները ձայնամեկուսացված չեն: Ես Ձեզ հետ ներս կմտնեի ու դռան հետևից կխոսեի Ձեզ հետ:

— Իսկ ի՞նչն է Ձեզ դրդում այդպես վարվել:

— Որովհետև այդպես եմ ուզում: Ես միշտ անում եմ այն, ինչ ցանկանում եմ:

— Իսկ ես ցանկանում եմ Ձեր քիթումռութը ջարդել:

— Ձեր բախտը չի բերում, չեք կարող: Դա անօրինական արարք է: Իսկ ես սիրում եմ մանր-մունր տհաճություններ պատճառել չարգելված միջոցներով: Շատ զվարճալի է. իմ զոհերն անզոր են իմ առաջ: Նրանք ոչինչ անել չեն կարողանում:

— Իսկ Դուք Ձեր կյանքում ավելի վեհ նպատակներ չունե՞ք:

— Ո՛չ:

— Իսկ ես ունեմ:

— Ստո՛ւմ եք:

— Ի՞նչ գիտեք:

— Դուք գործունյա մարդ եք: Ձեր նպատակը փողն է, իսկ դա բոլորովին էլ վեհ չէ:

— Ամեն դեպքում ես ոչ ոքի գլուխը չեմ տանում ու չեմ զզվեցնում:

— Դուք ինչ-որ մեկին հաստատ վնաս եք պատճառում:

— Եթե նույնիսկ այդպես է, Դուք ո՞վ եք, որ ինձ դրանում մեղադրեք:

— Ես Տեքսելն եմ, Տեքստոր Տեքսելը:

— Արդեն լավ գիտեմ:

— Ես հոլանդացի եմ:

— Օդանավակայանի թռչող հոլանդացին*:

— Թռչող հոլանդացի՞ն: Անփորձ նավապե՞տը: Այդ ռոմանտիկ պարզամիտի թիրախը միայն կանայք են եղել:

— Մինչդեռ Ձերը տղամարդի՞կ են:

* Լեգենդար առագաստանավ-ուրվական, որի հոլանդացի կապիտանը՝ Ֆիլիպ վան դեր Դեկկենը, Արևմտյան Հնդկաստանից վերադառնալիս սիրահարվում է իր նավում գտնվող մի երիտասարդ աղջկա և նրան առաջարկում իր կինը դառնալ, սակայն վերջինս ծովն է նետվում (Բոլոր ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

— Ես ընտրում եմ նրանց, ովքեր ինձ ոգեշնչում են: Դուք ինձ ոգեշնչեցիք, պարո՛ն Անգյուստ: Դուք նման չեք բիզնեսմենի: Դուք ինչ-որ յուրահատկություն ունեք, որն ինձ գրավեց ու նաև հուզեց:

— Չարաչար սխալվում եք. ոչ մի գրավիչ բան չունեմ:

— Այդ Դուք եք այդպես մտածում: Այնուամենայնիվ, այն միջավայրը, որում Դուք եք ապրում, չի կարողացել Ձեր մեջ սպանել աշխարհի նկատմամբ իր սրտի դռները բաց պահած երիտասարդին, որն իրականում շատ հետաքրքրասերն է: Դուք այրվում եք իմ գաղտնիքն իմանալու ցանկությունից:

— Ձեզ նման մարդիկ միշտ համոզված են, որ մյուսներն իրենցով շատ են հետաքրքրվում:

— Իրականում այդպես էլ կա:

— Դե, ուրեմն փորձե՛ք ինձ զբաղեցնել, որ ժամանակն էլ շուտ անցնի:

Ժերոմը գիրքը մի կողմ դրեց և ձեռքերը կրծքին խաչեց: Նա սկսեց զննել այդ կպչուն անձնավորությանը, ինչպես բեմում կանգնած հանդիսավարին կզններ:

— Անունս Տեքսել է՝ Տեքստոր Տեքսել:

— Դա Ձեր կրկնե՞րգն է:

— Ես հոլանդացի եմ:

— Մի՞թե կարծում էիք, որ մոռացել եմ:

— Եթե Դուք ինձ անընդհատ ընդհատեք, մենք հեռուն չենք գնա:

— Իսկ ես վստահ չեմ, որ ցանկանում եմ Ձեզ հետ հեռուն գնալ:

— Ի՞նչ գիտեք: Հիմա Ձեզ մի քանի բան կասեմ, և Դուք կհամոզվեք: Օրինակ՝ ես փոքր տարիքում մարդ եմ սպանել:

— Ի՞նչ ասացիք:

— Ութ տարեկան էի: Դասարանում Ֆրանկ անունով մի տղա կար: Հիանալի տղա էր, հմայիչ, քաղաքավարի, սիրալիր, ժպտադեմ: Դասարանում առաջինը չէր, սակայն շատ լավ արդյունքներ ուներ հատկապես մարմնամարզության ոլորտում, իսկ դա երեխաների մոտ համբավ ու ճանաչում ձեռք բերելու գրավականն էր: Բոլորը պաշտում էին նրան:

— Անշուշտ, բացի Ձեզնից:

— Նրան տանել չէի կարողանում: Պետք է խոստովանեմ, որ ես տկարակազմ էի, դասարանում վերջինն էի մարմնամարզությունից և ընկերներ էլ չունեի:

— Փաստորեն փոքր տարիքից արդեն Ձեզ չեն սիրել:

— Ես դրա համար շատ եմ տառապել: Ձուր էի ջանում դուր գալ, համակրանք շահել, զվարճալի լինել, սակայն ոչինչ չէր ստացվում:

— Ոչինչ չի փոխվել:

— Եվ դրանից իմ ատելությունը Ֆրանկի նկատմամբ ավելի էր աճում: Այդ ժամանակաշրջանում դեռ հավատում էի Աստծուն: Կիրակնօրյա մի երեկո անկողնումս սկսեցի աղոթք անել: Սատանայական աղոթք էր: Աստծուց խնդրեցի, որ սպանի ինձ համար արգահատելի դարձած այդ տղային: Երկարուձիգ ժամեր եմ անցկացրել՝ ամբողջ հոգով ջերմեռանդ աղոթելով:

— Շարունակությունը ենթադրում եմ:

— Հաջորդ առավոտյան դպրոցում ուսուցչուհին վշտահար ներս մտավ ու արցունքն աչքերին հայտնեց, որ Ֆրանկը նախորդ գիշեր մահացել էր սրտի անսպասելի կանգից:

— Բնականաբար, Դուք էլ մտածեցիք, որ դա Ձեր պատճառով էր:

— Իհարկե, իմ պատճառով էր: Ինչպե՞ս կարող էր միանգամայն առողջ փոքրիկ տղան սրտի նոպա ունենալ՝ առանց իմ միջամտության:

— Եթե դա այդքան հեշտ լիներ, երկրագնդի վրա կենդանի մարդ չէր մնա:

— Դասարանցիներս սկսեցին լաց լինել: Նման դեպքերում ասում են՝ «Միշտ ամենալավերն են հեռանում» և այլն: Իսկ ես մտածում էի. «Իհարկե, ամենալավից ազատվելու համար իզո՞ւր եմ այդքան ջանք գործադրել»:

— Ուրեմն, Դուք կարծում եք, որ ուղիղ հաղորդակցական կապ ունեք Աստծո հե՞տ: Երևի թե դրանում խորապես համոզված եք:

— Սկզբում վայելեցի հաղթանակի հաճույքը: Ես հաջողություն էի հասել: Ֆրանկն էլ իմ կյանքը չէր փչացնելու: Հետո քիչ քիչ հասկացա, որ երեխայի մահն ինձ այնքան էլ պատիվ չէր բերում: Իրականում այդ մահն իմ՝ չսիրված անճոռնի ճուտիկ լինելու կարգավիճակի մեջ փոփոխություն չէր մտցրել: Ինձ թվացել էր, որ Ֆրանկից ազատվելով՝ կարող եմ նրա տեղը զբաղեցնել: Ինչպիսի՜ սխալմունք...

— Շատ զարմանալի չէ: Դուք բացարձակապես զուրկ եք գրավչությունից:

— Հետզհետե սկսեցի խղճի խայթ զգալ: Եթե ինձ հաջողվեր ուշադրության կենտրոնում հայտնվել, ապա իմ կատարած ոճիրի համար չէի զղջա: Ասես ինքս ինձ մեղադրում էի, որ Ֆրանկին իզուր եմ սպանել:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark